ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«29» սեպտեմբեր 2017թ

ՀՐԱՄԱՆ
№ 229

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱԼՈԳԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-րդ հոդվածի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել և ընդունել կիրառման փոքր և միջին ձեռնարկությունների ենթակառուցվածքի օբյեկտների օրինակելի նախագծերի կատալոգը և ձեռնարկը («Պահեստի աշխատանքային նախագծերի մշակում և փորձաքննություն», «Ջերմատների աշխատանքային նախագծերի մշակում և փորձաքննություն», «Գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասերի աշխատանքային նախագծերի մշակում և փորձաքննություն», «Սառնարանային տնտեսության օբյեկտների աշխատանքային նախագծերի մշակում և փորձաքննություն», «Չորանոցների աշխատանքային նախագծերի մշակում և փորձաքննություն», «Օրինակելի նախագծերի կատալոգի, խորհրդատվական ձեռնարկի ձևավորում և հրատարակում» աշխատանքը, պետական գնման պայմանագիր՝ 2013 թվականի դեկտեմբերի 18-ի ՊՊԸԱՇՁԲ-13/7):

2. Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ. Պետրոսյանին՝ կատալոգը, դրանում ընդգրկված օբյեկտների նախագծային փաստաթղթերն ու խորհրդատվական ձեռնարկը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:

3. Նախարարության աշխատակազմի ճարտարապետության վարչության պետ Ն. Մարտիրոսյանին՝ կատալոգը, դրանում ընդգրկված օբյեկտների նախագծային փաստաթղթերն ու խորհրդատվական ձեռնարկը էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև կատալոգը և խորհրդատվական ձեռնարկը՝ թղթային կրիչներով տրամադրել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, Երևանի քաղաքապետին և այլ շահագրգիռ կազմակերպություններին:

Նախարար՝

Ն. Սարգսյան

Իսկականի հետ ճիշտ է

«29» VIII 2014թ.